ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
01 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 11-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջան համայնքի ավագանու 2019թվականի հունվարի 15-ի թիվ 10-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
Զեկ. Ա.Սանթրոսյան
2. Հաստիք հատկացնելու մասին:
Զեկ. Ա. Սանթրոսյան
3. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Խորհուրդների փողոցի 2-րդ նրբ. թիվ 8/6 հասցեի 950.0քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ.Ա. Սանթրոսյան
4. Դիլիջան համայնքի 2020թ.բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին:
Զեկ.Ա. Սանթրոսյան
5. Դիլիջան համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմիններում համայնքի ավագանու անդամների թեկնածուներ առաջադրելու մասին:
Զեկ.Ա. Սանթրոսյան
6. Դիլիջան համայնքում սոցիալական աջակցություն տրամադրելու չափորոշիչները սահմանելու մասին:
Զեկ. Ա. Սանթրոսյան
7. Դիլիջան համայնքի 2020թ. բյուջեի վարչական մասից ֆինանսավորում կատարելու մասին:
Զեկ.Ա.Սանթրոսյան
8. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 4788.6քմ ընդհանուր մակերեսով թվով 5 հողամասերը աճուրդի և 1852.2քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը կրկնաճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու, ինչպես նաև մեկնարկային գները հաստատելու մասին:
Զեկ.Ա.Սանթրոսյան
9. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Գյուղատնտեսական նշանակության հողերից 224.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը և Բնակավայրերի հողերից 776.4քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու, ինչպես նաև հողամասերի վարձակալության իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գները հաստատելու մասին:
Զեկ. Ա.Սանթրոսյան
10. Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող Գյուղատնտեսական նշանակության հողերից 66208.7քմ մակերեսով հողամասը աճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու, ինչպես նաև մեկնարկային գինը հաստատելու մասին:
զեկ. Ա.Սանթրոսյան
11. Դիլիջան քաղաքի Շահումյան փողոցի թիվ 17Գ հասցեում նախատեսվող բնակելի համալիրի թույլատրելի առավելագույն բարձրությունը հաստատելու մասին:
զեկ. Ա.Սանթրոսյան
12. Դիլիջան քաղաքի 1-ին փողոցի թիվ 2 հասցեում նախատեսվող հյուրանոցային համալիրի թույլատրելի առավելագույն բարձրությունը հաստատելու մասին:
զեկ. Ա.Սանթրոսյան

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
01 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 12-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԴԻՍ ՓՐՈՓԵՐԹԻՍ» բարեգործական հիմնադրամի 16.01.20120թ. թիվ CO-211-19 և «ՔԵՄՓ ՎԵՆՉՈՒՐՍ» փակ բաժնետիրական ընկերության 15.01.2020թ. թիվ CO-212-19 գրությունները, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջանի համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 10-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն.
1. Որոշման 1-ին մասի 2)-րդ կետում «Դավիթ Իսկանդարյան» անունը փոխարինել «Վազգեն Սեդրակյան»-ով:
2. Որոշման 1-ին մասի 3)-րդ կետում «Վազգեն Սեդրակյան» անունը փոխարինել «Արթուր Կարապետյան»-ով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
01 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 13-Ա

ՀԱՍՏԻՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն՝ Դիլիջան համայնքի աշխատակազմի հաստիքացուցակում կատարել փոփոխություն: Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Դիլիջանի համայնքի ավագանու 2019թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 167-Ա որոշման թիվ 2 հավելվածում կատարել լրացում և ավելացնել 31.-րդ կետ՝ 4 անասնաբույժի հաստիք՝ պաշտոնային դրույքաչափը՝ յուրաքանչյուրը 89610 դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
01 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 14-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ 2-ՐԴ ՆՐԲ. ԹԻՎ 8/6 ՀԱՍՑԵԻ 950.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ղեկավարին է դիմել քաղ. Սերժիկ Անուշավանի Եղիկյանը՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Խորհուրդների փողոցի 2-րդ նրբ. թիվ 8 հասցեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան սպասարկման 950.0քմ հողամասին կից գտնվող /Խորհուրդների փողոցի 2-րդ նրբ. թիվ 8/6 հասցեի/ 950.0քմ մակերեսով հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 950.0քմ հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Խորհուրդների փողոցի 2-րդ նրբ. թիվ 8/6 հասցեի 950.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 1179900 /մեկ միլիոն հարյուր յոթանասունինը հազար ինը հարյուր/ դրամ արժեքով օտարել քաղ. Սերժիկ Եղիկյանին:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Խորհուրդների փողոցի 2-րդ նրբ. թիվ 8/6 հասցեի 950.0քմ հողամասն, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով, 1179900 /մեկ միլիոն հարյուր յոթանասունինը հազար ինը հարյուր/ դրամ արժեքով քաղ. Սերժիկ Եղիկյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
01 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 15-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ.ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2020թ. բյուջեով չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից կատարել հատկացում:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և կատարել հատկացում՝
1. Դիլիջան համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից՝ 11-01-02, «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4891» (պահուստային միջոցներ) տնտեսագիտական հոդվածից 7422840/Յոթ միլիոն չորս հարյուր քսաներկու հազար ութ հարյուր քառասուն / ՀՀ դրամն ուղղել՝

01-01-01-<Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում> գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4111 (Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ) տնտեսագիտական հոդվածին 3942840/Երեք միլիոն ինն հարյուր քառասուներկու հազար ութ հարյուր քառասուն / ՀՀ դրամ և 01-03-03-<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ > գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի 4235 (Կառավարչական ծառայություններ) տնտեսագիտական հոդվածին 3480000/Երեք միլիոն չորս հարյուր ութսուն հազար՝/ ՀՀ դրամ

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
01 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 16-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Դիլիջան համայնքի ավագանու 2015թվականի օգոստոսի 28-ի թիվ 166-Ն որոշմամբ հաստատված կարգի 12-րդ կետի 1-ին ենթակետը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնում համայնքի ավագանու անդամի թեկնածուներ առաջադրել Գառնիկ Դավթյանին և Տիգրան Ստեփանյանին:

2. Քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի խորհրդակցական մարմնում համայնքի ավագանու անդամի թեկնածուներ առաջադրել Վարդան Վոլոդյայի Մնացականյանին և Վարդան Մուկուչյանին:

3. Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, սոցիալական /այդ թվում՝ երեխաների պաշտպանության, հարցերի խորհրդակցական մարմնում համայնքի ավագանու անդամի թեկնածուներ առաջադրել Սահակ Մկրտումյանին, Վարդան Հախվերդյանին և Արգամ Թամրազյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանըհաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
01 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 17-Ն

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Դիլիջան համայնքում սոցիալական աջակցություն տրամադրելու չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Հավելված
Դիլիջան համայնքի ավագանու
2020 թվականի փետրվարի 1-ի
N 17-Ն որոշման

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափորոշիչներով սահմանվում են Դիլիջան համայնքում (այսուհետ՝ համայնք) սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն (այսուհետ՝ աջակցություն) ցուցաբերելու կարգավորումները, աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու համար համայնքի ղեկավարի կողմից մշտական գործող հանձնաժողով ստեղծելու պայմանները և գործունեության ընթացակարգը, աջակցություն ստանալու համար դիմած անձի (անձնանց) կարիքների գնահատման միավորները և գնահատման թերթիկի ձևը:

2. Համայնքի ղեկավարը ստեղծում է Դիլիջան համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

3. Հանձնաժողովում ընդգրկվում են՝

1) համայնքի ավագանու մինչև չորս անդամ,

2) Դիլիջանի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպություններից մինչև երկու անդամ,

3) սոցիալական աշխատող,

4) Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմից մինչև երկու աշխատող:

4. Հանձնաժողովում կարող են ընդգրկվել այդպիսի ցանկություն հայտնած՝ համայնքի բնակիչ հանդիսացող շահագրգիռ քաղաքացիական հասարակության մինչև երկու ներկայացուցիչներ:

5. Համայնքի ղեկավարը հանձնաժողովի կազմից նշանակում է նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար: Նախագահի տեղակալը փոխարինում է նախագահին՝ նրա բացակայության ժամանակ:

6. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է սույն չափորոշիչներով սահմանված ընթացակարգերին համապատասխան: Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են քննարկումների միջոցով, որոնց արդյունքում կայացվում են իրավիճակային լուծումներ պահանջող որոշումներ և կազմվում եզրակացություններ:

7. Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները և ՀՈԱԿ-ների տնօրենները՝ անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուրն իր գործառույթների շրջանակներում, պարտավոր են աջակցել հանձնաժողովի աշխատանքներին:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

8. Աջակցությունից օգտվելու նպատակով համայնքի ղեկավարին կարող են դիմել.

1) համայնքի բնակիչները,

2) հասարակական կազմակերպությունները,

3) շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները:

9. Դիմումին կամ գրությանը կցվում են սոցիալական վիճակը հավաստող փաստաթղթեր:

10. Դիմումները կամ գրությունները՝ ստանալուց հետո մեկ շաբաթյա ժամկետում,

հանձնաժողովի քարտուղարը դրանք ներկայացնում է հանձնաժողովի նախնական քննարկմանը:

11. Նախնական քննարկման արդյունքում յուրաքանչյուր դիմումին կամ գրությանը տրվում է համապատասխան ընթացք (անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, տունայցի կատարում, կարիքների գնահատում, դիմողի հետ անհատական հանդիպում, դիմումի գրավոր պատասխանի տրամադրում):

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

12. Տունայց կատարելու նպատակով հանձնաժողովը ձևավորում է աշխատանքային խումբ և կազմում ժամանակացույց, որից հետո իրականացվում է դիմումատուի ընտանիքի կյանքի պայմանների ուսումնասիրություն:

13. Աշխատանքային խումբը այցելում է դիմողի ընտանիք, կատարում ընտանիքի կարիքների գնահատում և լրացնում գնահատման թերթիկը /Ձև 1/:

14. Անհրաժեշտության դեպքում կարող է իրականացվել կրկնակի այցելություն:

15. Ուսումնասիրության ժամանակ մասնագիտական օժանդակություն ցուցաբերելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում հանձնաժողովը կարող է հրավիրել համապատասխան մասնագետների (բժիշկ, հոգեբան և այլն):

16. Ընտանիքի գնահատման թերթիկը՝ տունայց կատարելու օրվանից եռօրյա ժամկետում, աշխատանքային խմբի կողմից ներկայացվում է հանձնաժողովի քարտուղարին:

17. Ներկայացված գնահատման թերթիկները քննարկվում են հանձնաժողովի նիստում:

18. Քննարկման արդյունքներով հանձնաժողովը կազմում է եզրակացություն, որը ստորագրում են հանձնաժողովի անդամները:

19. Հանձնաժողովի նախագահը եզրակացությունը ներկայացնում է համայնքի ղեկավարին՝ աջակցություն ցուցաբերելու վերջնական որոշում կայացնելու համար:

20. Համայնքի ղեկավարը որոշումը կայացնում է եզրակացությունը ստանալու օրվանից երկօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան դիմումը ստանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում:

21. Հրատապ լուծում պահանջող և անհապաղ աջակցության անհրաժեշտության վերաբերյալ դիմումների քննարկումն իրականացվում է արագացված ընթացակարգով՝ սոցիալական աշխատողի հատուկ եզրակացության հիման վրա, հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ, համայնքի ղեկավարի անմիջական հսկողությամբ և անհապաղ որոշումների կայացման միջոցով:

ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

22. Ընտանիքի կարիքների գնահատումը կատարվում է միավորային համակարգով՝ ելնելով հետևյալ չափորոշիչներից.

1) նպաստառու ընտանիք - 1 միավոր,
2) միայնակ մայր - 1 միավոր,
3) ամուսնալուծված ընտանիք - 1 միավոր,
4) բազմանդամ ընտանիք - 1 միավոր,
5) բանակում զինվոր - 2 միավոր (1 միավոր՝ պոտենցիալ ֆինանսական աղբյուրի բացակայություն, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),

6) ընտանիքի անդամի 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն - 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),

7) բնակվում են վարձով կամ վագոն-տնակում - 3 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ անհրաժեշտ գույքի բացակայություն, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),

8) արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետ) տուժած ընտանիք -3 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ անհրաժեշտ գույքի բացակայություն, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),

9) ընտանիքի անդամի մահվան դեպք - 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),

10) հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհվածի (անհետ կորածի) կամ ռազմական գործողությունների ժամանակ հաշմանդամ դարձած անձի ընտանիք - 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),

11) միայնակ թոշակառու - 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),

12) անբարենպաստ այլ պայմաններ - 5 միավոր (հիմնավորվում է լրացուցիչ տեղեկատվությամբ և մասնագետի դիտարկումներով):

23. Աջակցությունը ցուցաբերվում է նվազագույն 5 միավոր ստանալու դեպքում:

24. Սույն չափորոշիչների իմաստով ընտանիք է համարվում միևնույն հասցեյում մշտապես բնակվող, համատեղ տնտեսություն վարող անձանց խումբը:

ԸՆՏԱՆԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԸ

25. Ընտանիքի գնահատման փաստաթղթերի ամբողջական փաթեթում ներառվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմումը կամ գրությունը.

2) դիմողի և նրա ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները.

3) ընտանիքի կամ նրա անդամի սոցիալական կարգավիճակը հավաստող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները.

4) ընտանիքի գնահատման թերթիկը (ձև1) – լրացվում է հանձնաժողովի տունայց կատարած անդամների կողմից.

5) աջակցություն ցուցաբերելու մասին համայնքի ղեկավարի որոշումը.

6) աջակցությունը դիմողին տրամադրելու փաստը հավաստող փաստաթուղթ:

26. Հանձնաժողովի քարտուղարը յուրաքանչյուր դեպքի համար կազմում է առանձին գործ և ապահովում փաստաթղթերի փաթեթի ամբողջականությունը և պահպանվածությունը:

27. Գործերը համարակալվում են արաբական թվերով: Գործերի համարակալումը յուրաքանչյուր տարի վերսկսվում է: Ավարտված գործի էջերը համարակալվում են, գործերը կարվում են և կնքվում աշխատակազմի կնիքով:

Ձև 1

ԸՆՏԱՆԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք

«———»----------20----թ.

Ընդհանուր տվյալներ

Դիմողի անուն, ազգանուն, հայրանուն ----------

Հասցե ----------

Հեռախոս ----------

Ընտանիքի ժողովրդագրական տվյալները

Անուն, ազգանուն, հայրանուն	Կարգավիճակ	Ծննդյան օր, ամիս, տարի

Ընտանիքի իրավիճակը

Իրավիճակ	Նկարագիր
Բնակարանային պայմաններ	
Կոմունալ-կենցաղային պայմաններ	
Սանիտարա- հիգիենիկ պայմաններ	
Աշխատանքով ապահովվածություն	
Եկամուտներ	
Հագուստով ապահովվածություն	

Սննդով ապահովվածություն	
Առողջապահական կարիքներ	
Այլ	

Ընտանիքի սոցիալական կապերը

Հարազատներ, ընկերներ, ծանոթներ, հասարակական կազմակերպություններ, համայնք	
տվյալներ	կարգավիճակ

Լրացուցիչ տեղեկատվություն

Մասնագետի դիտարկումներ

Լուսանկարների առկայություն

Ընտանիքի կարիքների գնահատման սանդղակ

N	Չափորոշիչ	Չափորոշիչի համար սահմանված միավորը	Ընտանիքի ստացած միավորը
1	Նպաստառու ընտանիք	1	
2	Միայնակ մայր	1	
3	Ամուսնալուծված ընտանիք	1	
4	Բազմանդամ ընտանիք	1	
5	Բանակում զինվոր	2	
6	1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող ընտանիքի անդամ	2	
7	Բնակվում են վարձով կամ վագոն-տնակում	3	
8	Արտակարգ իրավիճակից տուժած ընտանիք	3	
9	Ընտանիքի անդամի մահվան դեպք	2	
10	Հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհվածի (անհետ կորածի) կամ ռազմական գործողությունների ժամանակ հաշմանդամ դարձած անձի ընտանիք	2	
11	Միայնակ թոշակառու	2	
12	Այլ անբարենպաստ պայմաններ	5	
	ԸՆԴԱՄԵՆԸ		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
01 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 18-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ. ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքում գործող «Հույսի Կամուրջ» հասարակական կազմակերպություն հաճախող հաշմանդամ երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու և անցկացնելու համար համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի բյուջեի վարչական մասից կատարել հատկացում:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Հույսի Կամուրջ» հասարակական կազմակերպությանը ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար՝ համայնքի 2020թ. բյուջեի վարչական մասից «Սոցիալական հատուկ արտոնություններ»/բաժին 10, խումբ 07, դաս 01, հոդված 4639/ հատկացնել 480000 դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
01 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 19-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ 4788.6ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 5 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ԵՎ 1852.2ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԿՐԿՆԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 4788.4քմ ընդհանուր մակերեսով թվով 5 հողամասերը աճուրդի և 1852.2քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը կրկնաճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով:
Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 4788.4քմ ընդհանուր մակերեսով թվով 5 հողամասերը աճուրդի և 1852.2քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը կրկնաճուրդի միջոցով օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջակությանը և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -3 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Աղյուսակ.

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ավագանու
2020թ. փետրվարի --7---ի թիվ --19---Ա որոշման

Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի աճուրդ-վաճառք

Հ/հ	Լոտ	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը /քմ/	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը /հողատեսքը/	Օգտագործման նպատակը	Մեկնարկային գին	Սահմանափակումներ
1	Լոտ 1/ՔՀ-20/	ք.Դիլիջան, Շահումյան 17/12	11-003-0675-0069	54.2	Բնակավայրերի հող	հասարակական կառուցապատման	հասարակական նշանակության օբյեկտի կառուցման	135,500	չկան
2	Լոտ 2/ՔՀ-20/	ք.Դիլիջան, Կամո 205/1	11-003-0350-0084	247.7	Բնակավայրերի հող	բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման	619,250	չկան
3	Լոտ 3/ՔՀ-20/	ք.Դիլիջան, Թբիլիսյան 17/10	11-003-0045-0054	3,921.0	Բնակավայրերի հող	հասարակական կառուցապատման	հասարակական նշանակության օբյեկտի կառուցման	9,802,500	չկան
4	Լոտ 4/ՔՀ-20/	ք.Դիլիջան, Սարի 7/1	11-003-0288-0026	192.2	Բնակավայրերի հող	բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման	480,500	չկան
5	Լոտ 5/ՔՀ-20/	ք.Դիլիջան, Մյասնիկյան 13/2	11-003-0313-0061	373.5	Բնակավայրերի հող	բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման	933,750	չկան
6	Լոտ 43/ՔՀ-19/ կրկնաճուրդ	ք.Դիլիջան, Մ.Գորկու 27/5	11-003-0215-0048	308.4	Բնակավայրերի հող	բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման	771,000	չկան
7	Լոտ 51/ՔՀ-19/ կրկնաճուրդ	ք.Դիլիջան, Տ.Պետրոսյան 4-րդ փկղ. 3	11-003-0040-0328	1,543.8	Բնակավայրերի հող	բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման	3,859,500	չկան

Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի Ժ/Պ *Ս.Եգանյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
01 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 20-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 224.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ 776.4ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացրել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Գյուղատնտեսական նշանակության հողերից 224.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը և Բնակավայրերի հողերից 776.4քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտերով, մակերեսներով, պայմաններով և տարեկան վճարի մեկնարկային գներով:
Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Գյուղատնտեսական նշանակության հողերից 224.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը և Բնակավայրերի հողերից 776.4քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով վարձակալության իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Աղյուսակ.

Դիլիջանի համայնքի ավագանու
2020թ. փետրվարի --7----ի թիվ --20-Ա որոշման

Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի վարձակալության իրավունքի մրցույթ										
Հ/հ	Լոտ	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը /քմ/	Նպատակային նշանակությունը	Հողատեսքը / Գործառնական նշանակությունը	Օգտագործման նպատակը	Հողամասի տրամադրման ժամկետը	Վարձակալության իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գինը /ՀՀ դրամ/	Սահմանափակումներ
1	Լոտ 1/Վ-20/	գ. Հովք	11-044-0311-0009	120.0	Գյուղատնտեսական նշանակության հող	վարելահող	վարելահող	25 տարի	3,600	առանց կառուցապատման իրավունքի
2	Լոտ 2/Վ-20/	գ. Հովք	11-044-0312-0006	104.0	Գյուղատնտեսական նշանակության հող	վարելահող	վարելահող	25 տարի	3,120	առանց կառուցապատման իրավունքի
3	Լոտ 3/Վ-20/	ք. Դիլիջան Խորհուրդների 2-րդ նրբ. 8/7	11-003-0316-0132	776.4	Բնակավայրերի հող	բնակելի կառուցապատման	այգեգործության	25 տարի	15,528	առանց կառուցապատման իրավունքի

Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի Ժ/Պ *Ս. Եգանյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
01 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 21

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 66208.7ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվել Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող Գյուղատնտեսական նշանակության հողերից 66208.7քմ մակերեսով հողամասը աճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու մասին հարցը՝կից աղյուսակում ներկայացված պայմաններով և մեկնարկային գնով:
Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող Գյուղատնտեսական նշանակության հողերից 66208.7քմ մակերեսով հողամասը աճուրդի միջոցով օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջակությանը և հաստատել մեկնարկային գինը՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -2

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Աղյուսակ.

Դիլիջանի համայնքի ավագանու
2020թ. փետրվարի ---------ի թիվ 21---------Ա որոշման

Դիլիջանի համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդ-վաճառք

Հ/հ	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը /քմ/	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը /հողատեսքը/	Օգտագործման նպատակը	Մեկնարկային գին	Սահմանափակումներ
1	գ.Հովք	11-044-0308-0040	66208.7	Գյուղատնտեսական նշանակության հող	խոտհարք	խոտհարք	7,945,044	չկան

Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի Ժ/Պ *Ս.Եգանյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
01 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 22-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 17Գ ՀԱՍՑԵՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարին է դիմել <<Մոդուլար Կոնստրակշն>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Մ.Բեգլարյանցի, տեղեկացնելով Դիլիջան քաղաքի Շահումյան փողոցի թիվ 17գ հասցեում նախատեսվող ներդրումային ծրագրի, ծրագրի շրջանակներում նախատեսվող կառույցների 17.41մ բարձրության և այն փոփոխելու դեպքում ծրագրի ոչ նպատակահարմար լինելու մասին:
Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. նոյեմբերի 30-ի թիվ 1723-Ն որոշմամբ հաստատված Դիլիջանի քաղաքային բնակավայրի գլխավոր հատակագծին կից գոտևորման հատակագծով թույլատրելի առավելագույն բարձրությունը սահմանված է 12մ:
Վերոգրյալի վերաբերյալ առկա է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և Տավուշի մարզպետարանի դիրքորոշումը, այն է՝ հարցը քննարկել համայնքի ավագանու նիստում և ղեկավարվել համայնքի ավագանու որոշմամբ հաստատված թույլատրելի բարձրությամբ:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2020թ. հունվարի 24-ի թիվ 01//00433-2020 գրությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Դիլիջան քաղաքի Շահումյան փողոցի թիվ 17գ հասցեում նախատեսվող բնակելի համալիրի թույլատրելի առավելագույն բարձրությունը հաստատել ներկայացված էսքիզով նախատեսվող բարձրությունը, այն է՝ <<17.41մ>>:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
01 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 23-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարին է դիմել <<ՖԻՄ Մենեջմենթ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա.Ֆրանգուլյանի, տեղեկացնելով Դիլիջան քաղաքի 1-ին փողոցի թիվ 2 հասցեում նախատեսվող ներդրումային ծրագրի, ծրագրի շրջանակներում նախատեսվող կառույցների 17.4մ բարձրության և այն փոփոխելու դեպքում ծրագրի ոչ նպատակահարմար լինելու մասին:
Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. նոյեմբերի 30-ի թիվ 1723-Ն որոշմամբ հաստատված Դիլիջանի քաղաքային բնակավայրի գլխավոր հատակագծին կից գոտևորման հատակագծով թույլատրելի առավելագույն բարձրությունը սահմանված է 12մ:
Վերոգրյալի վերաբերյալ առկա է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և Տավուշի մարզպետարանի դիրքորոշումը, այն է՝ հարցը քննարկել համայնքի ավագանու նիստում և ղեկավարվել համայնքի ավագանու որոշմամբ հաստատված թույլատրելի բարձրությամբ:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2020թ. հունվարի 24-ի թիվ 01//00433-2020 գրությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Դիլիջան քաղաքի 1-ին փողոցի թիվ 2 հասցեում նախատեսվող հյուրանոցային համալիրի թույլատրելի առավելագույն բարձրությունը հաստատել ներկայացված էսքիզով նախատեսվող բարձրությունը, այն է՝ <<17.4մ>>:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ